ՏԵՂԵԿԱՆՔ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
2013-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐՈՎ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(տարեկան)

Միջոցառման անվանումը	**Ակնկալվող արդյունքը 2013թ**	**Միջոցառումների կատարման արդյունքները**	**Պատասխանատու**
1. Կրթության ոլորտի իրավական ակտերի վերանայում, կոռուպցիայի ռիսկերի գնահատում	- քաղաքացիական հասարակության և շահառուների առաջարկությունների հիման վրա որոշված է առաջնահերթ վերանայման ենթակա իրավական ակտերի ցանկը	Հանրակրթության ոլորտում *Հաստատվել է* <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը>>, <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչները և որակավորման տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը>>, <<ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգը>>, <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների կարգերը, <<Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների կարգը>>: *Լրամշակման փուլում է* <<Հայաստանի Հանրապետության պետական մասնագիտացված հանրակրթական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության նախագիծը: *Մշակման փուլում է* <<Սովորողի անհատական ուսուցման կարգը>>: <<Հանրակրթության ոլորտում իրականացվող կրթական բնույթի առարկայական մրցույթների, մրցաշարերի, օլիմպիադաների չափորոշիչները սահմանելու մասին>> կարգի նախագիծն ուղարկվել է ՀՀ կառավարություն՝ հաստատման: *Մշակվել է* նաև <<Նախադպրոցական ուսումնական հաստատության տարիֆիկացիոն ցուցակի ձևաթուղթը և լրացման կարգը>>, որը հաստատման կներկայացվի <<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի ընդունումից հետո: Մասնագիտական կրթության ոլորտում *Մշակման փուլում են՝* <<Մագիստրատուրայի ընդունելության և	Իրավաբանական վարչություն (համակարգող), այլ ստորաբաժանումներ՝ ըստ իրավական ակտի էության

		ուսուցման>>, <<Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում երկրորդ մասնագիտություն ստանալու>> և <<Կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողությունը կասեցված և (կամ) դադարեցված բարձրագույն ուսումնական հաստատությունների (կամ դրանց մասնագիտությունների) սովորողների ընթացիկ և (կամ) ամփոփիչ ատեստավորման>> կարգերի նախագծերը: <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը ներկայումս ՀՀ Ազգային Ժողովում դրված է քննարկման: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013 թվականի փետրվարի 6-ին առաջին ընթերցմամբ ընդունվել է <<Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը: 30.05.2013թ. մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի քննարկմանն էր ներկայացվել <<Պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող ոլորտների մասնագիտությունների գծով ուսուցման կազմակերպման համար բուհերի ընտրության և մասնագիտական կրթաթոշակների տրամադրման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը, ֆինանսական ապահովվածություն չունենալու պատճառով այն մերժվել է:	
2. Սովորողների ընթացիկ գնահատման, դպրոցի ավարտական և բուհական ընդունելության միասնական քննությունների համակարգի կատարելագոր ծում	- գնահատված է համակարգչային ադապտիվ թեստավորման համակարգի իրականացման հնարավորությունները - մշակված և հաստատված է <<Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության	- Վերանայվել է ընդունելության քննությունների համակարգը՝ իրականացվել են միասնական քննությունների համակարգչային ադապտիվ թեստավորման միջոցով կազմակերպման հնարավորության վերլուծական հետազոտումներ և տրվել է ներդրման ծախսերի ֆինանսական գնահատականը: - Հաստատվել է <<Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների կարգը>>:	Հանրակրթության վարչություն, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, ԳԹԿ (համաձայնությամբ)

	գնահատման երաշխավորությունների կարգը>>		
3. Երաշխավորված անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթությանն անցման համար օրենսդրական հիմքի ստեղծում	- փոփոխություններ և լրացումներ են կատարված <<Կրթության մասին>> և <<Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքներում - լրամշակված է <<Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգը>>	- Մշակվել է <<Կրթության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ Օրենքների նախագծերի փաթեթը, որը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: Նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 5-ի նիստով և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ Ազգային Ժողով: Օրենքով նախատեսվում է, որ <<նախնական, միջին և բարձրագույն պետական ուսումնական հաստատություններ, ինչպես նաև ոչ պետական հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով>>: Օրենքի մեկ այլ դրույթի համաձայն՝ <<եթե արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունում իրականացվում է հիմնական ընդհանուր կրթության հիմքով մասնագիտական կրթական ծրագիր, ապա դրանում ընդգրկված ուսանողի պարտադիր միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագիրը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցներից՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության համանման ծրագրին համապատասխան ֆինանսավորմամբ>>: - Հաստատվել է <<Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգը>>:	Իրավաբանական վարչություն, Հանրակրթության վարչություն, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն

	- մշակված և հաստատված է <<Սովորողի անհատական ուսուցման կարգը>>, որը կսահմանի օլիմպիադաների մասնակցող կամ դպրոց չհաճախող երեխաների կրթության կազմակերպման մեխանիզմները	- Մշակման փուլում է <<Սովորողի անհատական ուսուցման կարգի>> նախագիծը, որով կանոնակարգվելու է կրթության գործընթացից դուրս մնացող երեխաների հանրակրթության կազմակերպումը:	
4. Բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետ համակարգի ներդրում՝ ԲԿ որակի և համապատասխանության բարձրացման, արդյունավետության բարելավման և հասարակության տարբեր սոցիալական խմբերի համար հավասար մատչելիության ապահովման նպատակով	- ներդրված են ուսանողների ֆինանսական աջակցության նոր մեխանիզմներ, այդ թվում սոցիալապես անապահով շուրջ 1000 ուսանողների տրամադրվել են դրամաշնորհներ և պետության կողմից արտոնյալ՝ տոկոսադրույքի մասնակի փոխհատուցմամբ վարկեր են տրվել լավ սովորող ուսանողներին - մշակված և հաստատված է բուհերում ուսման	- Անվանական կրթաթոշակների բաշխման, ինչպես նաև ուսման վարձերի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ժամանակ բուհերը հիմք են ընդունում ուսանողի ընթացիկ առաջադիմությունը: Ուսումնասիրվել են բուհերում գործող միջին որակական գնահատականի սահմանային շեմերը, ինչպես նաև կատարվել են վերջին 5 տարիների ուսանողների ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող խմբերի ուսումնասիրություններ: <<Կրթության մասին>> և <<Բարձրագույն և հետբուհական կրթության մասին>> ՀՀ օրենքներում առաջարկվել է փոփոխություններ և լրացումներ, համաձայն որի՝ հնարավորություն է ընձեռվում բուհերի միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցում իրականացնել և ընդլայնել սոցիալապես խոցելի խմբերի ուսանողներին և ստեղծել հավասար ֆինանսական աջակցության պայմաններ՝ միևնույն կարգավիճակ ունեցող ուսանողների համար: Սահմանվել է ուսման վարձի առավելագույն շեմ՝ ըստ կրթական աստիճանների, մասնագիտությունների և հավատարմագրման արդյունքների, ինչպես նաև կառավարության լիազոր մարմնի կողմից հաստատված հատուկ սոցիալական ծրագրերի: 2013 թվականին մեկնարկել է <<Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու մասին>> գործընթացը: Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու նպատակով	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն

	վարձի հաշվարկման կարգը - ուսանողների ուսման առաջադիմության խրախուսման նպատակով մշակված և հաստատված է լավագույն ուսանողի անվանական կրթաթոշակների տրամադրման կարգը - ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրման շրջանակներում 2 պետական բուհերում իրականացված են նորարարական ծրագրեր	սահմանվել է միջին որակական գնահատականի շեմ՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով 75 %, այս պարագայում՝ 417 ուսանողի: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ծրագիրն իրականացվում է առաջին անգամ, ուստի ՀՀ ԿԳ նախարարի հաջորդ հրամանով միջին որակական գնահատականների շեմերը նվազեցվել են՝ սահմանվելով՝ բակալավրի կրթական ծրագրով՝ 40%, մագիստրոսի կրթական ծրագրով՝ 50%: Արդյունքում՝ հնարավորություն է ընձեռվել պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում իրականացնել 845 ուսանողի համար: - ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 29-ի N1005-Ն որոշմամբ հաստատվել է <<Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման կարգը, մրցույթի չափանիշները և մրցույթի մասնակցության հայտի ձևը>>: - 2013 թվականի սեպտեմբերին ԲՈՒՀ-երի հետ կնքվել են նորարարական ծրագրերի իրականացման դրամաշնորհային պայմանագրեր: ԲՈՒՀ-երի ներկայացուցիչներին տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն դրամաշնորհային ծրագրերում իրականացվելիք գնումների ընթացակարգերի վերաբերյալ: Մի շարք ԲՈՒՀ-եր <<Կրթական ծրագրերի կենտրոն>>(ԾԻԳ) հաստատմանն են ուղարկել համապատասխան գնումների փաթեթներ: ԾԻԳ-ի կողմից կազմակերպվել է հանդիպում ԲՈՒՀ-երի ներկայացուցիչների համար, որի ընթացքում պարզաբանվել են մրցութային փաստաթղթերում համակարգիչների տեխնիկական բնութագրիչների նշման հետ կապված խնդիրները: Նորարարությունների մրցակցային հիմնադրամի գործարկման ղեկավար ձեռնարկում կատարվել է համապատասխան փոփոխությունը և ուղարկվել Համաշխարհային Բանկ (ՀԲ) հաստատման: 2013 թվականի նոյեմբերին կազմվել և հաստատվել է Նորարարությունների մրցակցային հիմնադրամի գործարկման ղեկավար ձեռնարկի հայերեն տարբերակը:	
5. Բուհերում որակի ապահովման	- 8 պետական և 3 ոչ պետական	- ՀՀ բուհերում գործում են որակի ապահովման կենտրոններ: 2013թ. ընթացել են 20.12.2011թ. դրամաշնորհային պայմանագրեր կնքած	Բարձրագույն և հետբուհական

ներքին համակարգերի ներդրում	բարձրագույն ուսումնական հաստատություններում ստեղծված է որակի ապահովման կառուցվածքային միավոր և ներդրված են որակի ապահովման ներքին մեխանիզմները	10 պետական և 05.09.2012թ. դրամաշնորհային պայմանագրեր կնքած 8 պետական և 3 ոչ պետական բուհերում որակի ապահովման կառուցվածքային միավորների ստեղծման/բարելավման և որակի ապահովման ներքին մեխանիզմների ներդրման աշխատանքները: Հստակեցվել են ուսանողների գիտելիքների գնահատման համակարգերը: Առաջին և երկրորդ փուլով դրամաշնորհներ ստացած 18 պետական և 3 ոչ պետական բուհերը շարունակել են դրամաշնորհային պայմանագրերով նախատեսված աշխատանքները և ամեն փուլի ավարտից հետո ներկայացրել համապատասխան ֆինանսական և ծրագրային հաշվետվությունները: Ըստ նախատեսված բուհերը ներկայացրել են նաև միջնաժամկետ հաշվետվությունները: Հաշվետու ժամանակաշրջանում ՄԿՈՒԱՊԱԿ-ը իրականացրել է միջնաժամկետ մոնիտորինգ նշված բուհերում և ներկայացրել մոնիտորինգի եզրակացություններ համապատասխանաբար առաջին և երկրորդ փուլով դրամաշնորհներ ստացած բուհերի համար: Բուհերի կողմից դրամաշնորհային ծրագրերի կատարման միջնաժամկետ հաշվետվություններն ու մոնիտորինգի եզրակացությունները քննարկվել են «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրա հետագա բարելավման» դրամաշնորհային ծրագրի Կառավարման խորհրդի համապատասխան նիստերում: Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել է երրորդ փուլով բուհերին դրամաշնորհների տրամադրման գործընթացը, որի արդյունքում կնքվել են ևս 5 դրամաշնորհային պայմանագրեր հետևյալ բուհերի հետ: *Պետական բուհեր*- Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման ակադեմիա, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն: *Ոչ պետական բուհեր*- «Եվրասիա» միջազգային համալսարան, «Երևանի Մովսես Խորենացու անվան» համալսարան: Երրորդ փուլով դրամաշնորհային ծրագրերի իրականացումը մեկնարկել է:	մասնագիտական կրթության վարչություն, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ
6. Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում քոլեջից բուհ անցման գործընթացում	- ՄՄՈՒՀ-ի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտի համար բուհում (երկրորդ կամ երրորդ կուրսում) ուսումը շարունակելու	- Մշակվել է <<Կրթության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ Օրենքների նախագծերի փաթեթը, որում ուժը կորցրած է ճանաչվել այն	Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն

	սահմանափակում կիրառելու նպատակով <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի մշակում	կետը, որի արդյունքում մշակվել էր կարգ և ՄՄՈՒՀ-ի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտին հնարավորություն էր ընձեռնվում առանց քննության ուսումը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ երկրորդ կամ երրորդ կուրսից: Օրենքում փոփոխությունների ընդունման դեպքում ՄՄՈՒՀ-ի շրջանավարտները բարձրագույն ուսումնական հաստատություն կարող են ընդունվել ընդհանուր հիմունքներով: Նախագծի փաթեթը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ Ազգային Ժողով:	
8. Միջազգային չափանիշների հետ համադրելիությունը ապահովելու նպատակով ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի ներդրում	- փորձարկվել է հանրակրթական դպրոցների վարկանիշավորման համակարգը (սկզբունքները, մեթոդաբանությունը, հաշվարկի մեխանիզմները և չափանիշները)	- Ստեղծվել են ՀՀ հանրակրթական դպրոցների և բուհերի վարկանիշավորման համակարգերը: Հանրապետության գյուղական հիմնական փոքր, քաղաքային միջնակարգ մեծ և ավագ դպրոցներում իրականացվել է փորձնական վարկանիշավորում: Նշված դպրոցները Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն են ներկայացրել համապատասխան տեղեկատվություն և կազմվել է վարկանիշները՝ հինգ տասնյակին մոտ ցուցանիշների հիման վրա: Վարկանիշավորման համակարգը ներկայացված է առանձին ինտերնետային կայքում, որտեղ շահառուները հնարավորություն ունեն ցանկացած ցուցանիշով ստանալ դպրոցների վարկանիշավորման իրենց նախընտրած սանդղակը: schoolrate.armedu.am կայքն արդեն հասանելի կլինի 2014թ. հունվարի 20-ից: Կայքում տեղակայված է դպրոցների ընդհանուր վարկանիշը, գործում են <<Աշակերտների ուսումնառություն>>, <<Ուսուցիչներ>>, <<Դպրոցի ակտիվություն>>, <<Կառավարման արդյունավետություն>> բաժինները: Հնարավոր է դպրոցների վարկանիշավորումը ստանալ՝ ըստ մեկ չափանիշի՝ ընտրելով 49 ցուցանիշներից յուրաքանչյուրը: Վարկանշավորման համակարգը առաջին անգամ փորձարկվել է 2013թ-ին, որի արդյունքում իրականացվել են մի շարք փոփոխություններ մեթոդաբանության մեջ: Ծրագիրը դեռևս փորձնական է, փոխությունները կշարունակվեն՝ նպատակ ունենալով ձևավորել դպրոցների դասակարգման և վարկանիշավորման հուսալի, համարժեք չափանիշների և գնահատելի ցուցանիշների համախումբ:	Հանրակրթության վարչություն, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչություն

	- փորձնական վարկանիշավորում է իրականացվել 20 բարձրագույն ուումնական հաստատություններում	- Փորձնական վարկանիշավորման գործընթացում ներառված բարձրագույն ուսումնական հաստատություններից հավաքագրվել ու համակարգ է մուտքագրվել վարկանիշավորման համար անհրաժեշտ տեղեկատվությունը, իրականացվել է ընտրանքային հետազոտություն բուհերի դասախոսների, ուսանողների և գործատուների շրջանակներում: Իրականացվել է 20 բարձրագույն ուսումնական հաստատությունների փորձնական վարկանիշավորում, որի արդյունքում ստեղծվել է բարձրագույն կրթություն տրամադրող հաստատությունների վերաբերյալ համապարփակ և թափանցիկ դասակարգման համակարգ՝ ԲՈՒՀ-երի հաշվետվողականությունը և թափանցիկությունը բարձրացնելու նպատակով:	
9. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի կատարելա գործում	- փորձարկվել է բարձրագույն մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը - փորձարկվել է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը	- 2012թ. նոյեմբերի 6-ին <<Կրթական ծրագրերի կենտրոնi>> (ԾԻԳ) և <<Սիներջի Ինթերնեյշնլ>> կազմակերպության միջև կնքված պայմանագրի համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանում <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ԾԻԳ-ի կողմից ավարտվել են մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ներառվելիք հաստատությունների ցանկի ճշգրտման աշխատանքները: Ճշգրտված ցանկի հիման վրա պատրաստվել և ՀԲ հաստատմանն է ուղարկվել 2012 թվականի նոյեմբերի 6-ին <<Սիներջի ինթերնեյշնլ սիստեմս ընկերության>> հետ կնքված պայմանագրի լրացուցիչ համաձայնագիրը: ՀԲ կողմից հաստատվելուց հետո վերոնշյալ լրացուցիչ համաձայնագիրը կնքվել է 2013թ. մայիսի 29-ին: <<Կրթության որակ և համապատասխանություն>> վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացվել են մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ՄԿԿՏՀ-ի) մշակման, տեղադրման, ինչպես նաև այդ հաստատությունների ներկայացուցիչների վերապատրաստման աշխատանքները: ՄԿԿՏՀ-ում ներառված են ընդհանուր թվով 182 միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունները: Մշակվել և հաստատման է ներկայացվել ՄԿԿՏՀ տվյալների մուտքագրման և հաշվետվությունների փոխանցման կարգը: <<Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը>> տեղադրվել է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տեղեկատվական կենտրոնական հանգույցում (սերվերում):	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն

10. Դպրոցների գործունեության թափանցիկության և կառավարման արդյունավետության բարձրացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով	- ՀՀ հանրակրթական բոլոր դպրոցներում գործում է <<Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգը>>, որը հնարավարություն է ընձեռում յուրաքանչյուր աշակերտի մասին հավաքագրված անձնավորված տեղեկատվությունը կուտակել մեկ միասնական տեղեկատվական շտեմարանում, բացառել ով նույն աշակերտի բազմակի հաշվառումը, նվազեցնելով տեղեկատվության անճշտությունների և միտումնավոր սխալների քանակը, ինչպես նաև վերահսկել աշակերտի դպրոցից դպրոց տեղափոխության գործընթացը - գործում է <<Ավարտական փաստաթղթերի հաշվառման	- 2013 թվականին ավարտվել են ՀՀ բոլոր մարզերի պետական հանրակրթական դպրոցներում <<Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի>> տեղակայման աշխատանքները: Համակարգը տեղադրված է 1386 դպրոցներում: Համակարգի շահագործման համար նախատեսված վերապատրաստումների համար բոլոր ուսումնական հաստատություններից ՀՀ մարզերում ստեղծվել են վերապատրաստման խմբեր: Վերապատրաստումները կիրականացվեն 2014թ. հունվար ամսին: - Բնականոն գործել է <<Ավարտական փաստաթղթերի հաշվառման համակարգը>>: Շարունակվել են միասնական տեղեկատվական շտեմարանում հանրակրթական դպրոցների, նախնական և միջին մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հատատությունների շրջանավարտների տվյալների ամբողջացման	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն

	համակարգը>>, որը հնարավորություն է ընձեռում կուտակել տեղեկատվությունը մեկ միասնական տեղեկատվական շտեմարանում, տեղեկատվությունը հասանելի դարձնել ոլորտի մասնակիցներին, նվազեցնել անճշտությունների քանակը, ապահովել տվյալների/տեղեկատվության ամբողջականությունը և հուսալիությունը	աշխատանքները: Տեղեկատվությունը հասանելի է արդեն վերջին 7 ուսումնական տարիների համար:	
11. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման արդյունավետության բարձրացում	- մշակված են գյուղական թերհամալրված 370 հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմներ	- Մշակված է գյուղական թերհամալրված 370 հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների հայեցակարգը:	Հանրակրթության վարչություն, Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն

12. ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ուսումնական հաստատությունների գործունեության նկատմամբ վերահսկողության արդյունավետության և թափանցիկության բարձրացում	- մշակված և հաստատված են սուբյեկտիվիզմի գործոնը նվազեցնող նոր ստուգաթերթեր, ձևաթղթեր - հրապարակված են ուսումնական հաստատություններում անցկացված տեսչավորման արդյունքները - վարչական/կարգապահական տույժերի կիրառում՝ ըստ կրթական մակարդակների	- ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 6-ի N598-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և ստուգումների ստուգաթերթերը (նախադպրոցական կրթություն, հանրակրթություն, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն): - ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում (www.edu.am) հրապարակվել է Կրթության պետական տեսչության 2012 և 2013 թվականների տարեկան հաշվետվությունները: ՀՀ ԿԳ նախարարության և Կրթության պետական տեսչության կայքերում, <<Կրթություն>> շաբաթաթերթում հրապարակվել են ՀՀ մարզպետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում, ուսումնական հաստատություններում իրականացված տեսչավորումների, ուսումնասիրությունների արդյունքները, դրանց հիման վրա մշակված ամփոփ հաշվետվությունները, ընդհանուր և թեմատիկ վերլուծությունները: - Տեսչավորումների, ուսումնասիրությունների արդյունքում Կրթության պետական տեսչության կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա համապատասխան լիազորված մարմինների կողմից կարգապահական տույժեր են կիրառվել խախտումներ արձանագրած ուսումնական հաստատությունների տնօրենների նկատմամբ: 2013թ. ընթացքում իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված խախտումների համար թվով 9 ուսումնական հաստատությունների տնօրենների նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր:	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն, Հանրակրթության վարչություն, Կրթության պետական տեսչություն
13. Բարձրագույն ուսումնական հաստատությունների հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի մշակում	- ԲՈՒՀ-երի կառավարման խորհուրդների կողմից հաստատված է հակակոռուպցիոն միջոցառումների տարեկան ծրագիրը	- ՀՀ բուհերի կողմից մշակվել և ՀՀ կրթության և գիտության նախարարություն են ներկայացվել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրեր:	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, պետական ԲՈՒՀ-եր

	- ԲՈՒՀ-երի կառավարման խորհուրդների կողմից ընդունված և հրապարակված են կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունները	- Առանձին բուհերի կողմից ՀՀ կրթության և գիտության նախարարություն են ներկայացվել իրենց կողմից իրականացված հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման արդյունքների մասին տեղեկանքներ:	
14. Ապահովել ուսումնական հաստատություններում գնումների թափանցիկությունը և հրապարակայնությունը	- ապահովված է գնումների գործընթացի հարապարակայնությունը - հրապարակված են գնումների արդյունքները	- Ապահովված է ուսումնական հաստատություններում գնումների թափանցիկությունը և հրապարակայնությունը: Ուսումնական հաստատությունների կողմից մրցութային կարգով իրականացվող գնումների մասին հայատարարությունները /բաց ընթացակարգ, պարզեցված ընթացակարգ, շրջանակային համաձայնագիր/ ՀՀ ԿԳ նախարարությունը սահմանված կարգով տեղադրում է www.gnumner.am կայքում: - Յուրաքանչյուր գնման գործընթացի արդյունքում ուսումնական հաստատությունների կողմից իրականացված գնումների արդյունքները /տեղեկատվություն կնքված պայմանագրերի կամ մրցույթները չկայացած լինելու մասին/ ՀՀ ԿԳ նախարարության կողմից տեղադրվում են www.gnumner.am կայքում:	Կրթական ծրագրերի կենտրոն (ԿԾԿ)
15. Մանկավարժական կադրերի ընտրության, նշանակման և խրախուսման գործընթացների կատարելագործում	- լրամշակված է <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը>>, որը հստակեցնում է մրցույթի փուլերի չափանիշները - լրամշակված են <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա	- Լրամշակվել ու հաստատվել է <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը>>: - Լրամշակվել ու հաստատվել են <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների կարգերը:	Հանրակրթության վարչություն, Անձնակազմի կառավարման վարչություն

	լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների կարգերը, որոնք հստակեցնում են մրցույթների առանձին փուլերի չափանիշները	2013 թվականին առաջին անգամ կազմակերպվել և անցկացվել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթը:	
16. Կրթության կառավարման որակի և արդյունավետության բարձրացում	- մշակված են նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների պարտադիր վերապատրաստման և հավաստագրման կարգերի նախագծերը	- Մշակվել է <<Կրթության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ Օրենքների նախագծերի փաթեթը, որում ներառվել է համապատասխան դրույթներ: Օրենքով նախատեսվում է, որ <<արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրեն կարող է ընտրվել կամ նշանակվել այն անձը, ով ունի արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր)>>: Միաժամանակ տնօրենի թեկնածուն պետք է նաև անցած լինի համապատասխան վերապատրաստում: Նախագծի փաթեթը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ Ազգային Ժողով: Օրենքի ընդունումից հետո կմշակվեն համապատասխան կարգերի նախագծերը:	Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն, Անձնակազմի կառավարման վարչություն
17. Գիտական կադրերի պատրաստման համակարգի կատարելա գործում	- լրամշակված են գիտական աստիճան և կոչումներ շնորհելու կարգերը - փոփոխված է <<Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին>> ՀՀ օրենքը	- Գիտական աստիճան և կոչումներ շնորհելու կարգերը լրամշակվել ու սահմանված կարգով դրվել են շրջանառության մեջ: - <<Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը մշակվել և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն, որից հետո այն ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013 թվականի փետրվարի 6-ին ընդունվել է առաջին ընթերցմամբ: Մասնավորապես փոփոխություն է կատարվել Օրենքի 16-րդ հոդվածում, որը վերաբերում է գիտական աստիճան և կոչումներ շնորհելու ընթացակարգերին:	Գիտության պետական կոմիտե, Բարձրագույն որակավորման հանձնաժողով

18. Կրթության և գիտության ոլորտի թափանցիկու թյան, հաշվետվողականու թյան և հանրային իրազեկման բարձրացում	- լուսաբանված է կրթության ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքը - լուսաբանվել են կրթության ոլորտում ներգրավված շահառուների շրջանում իրականացված ուսումնասիրություններ ի արդյունքները	- Հանրապետական ԶԼՄ-ներում լուսաբանվել է <<Կրթության և գիտության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013–2014թթ. միջոցառումների համալիր ծրագիրը>> /32 լրատվական հեռուստառեպորտաժ, 18 հարցազրույց, տեղեկատվական բնույթի 96 հրապարակում/: Ծրագրի նախագիծը դրվել է հանրային քննարկման ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում, ապա հաստատված ծրագիրը տեղադրվել է ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքի՝ <<Հակակոռուպցիոն ծրագիր>> բաժնում: Փետրվարի 16-ին կայացել է ՀՀ ԿԳ նախարարի հանդիպումը բլոգերների և սոցցանցերի ակտիվ օգտատերերի հետ, որտեղ, ի թիվս այլ հարցերի, ներկայացվել է հակակոռուպցիոն ծրագիրը: Մարտի 15-ին կազմակերպվել է թեմային նվիրված ՀՀ ԿԳ նախարարի մամուլի ասուլիսը: ՀՀ ԿԳ նախարարը ուսումնական տարվա նախաշեմին շրջաբերական նամակով դիմել է ՀՀ մարզպետներին և Երևանի քաղաքապետին, որում, մասնավորապես, նշվում է, որ ՀՀ ԿԳ նախարարությունը երաշխավորել է թեմատիկ և կիսամյակային ստուգողական գրավոր աշխատանքների տետրեր, որոնք կարող են գործածվել ուսումնական հաստատություններում՝ բացառապես ծնողական խորհուրդների համաձայնությամբ: Միաժամանակ ՀՀ ԿԳ նախարարը ՀՀ մարզպետներին և Երևանի քաղաքապետին առաջարկել է համապատասխան հանձնարարականներ տալ ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ այլ աշխատանքային տետրերի, օրագրերի և ուսումնաօժանդակ նյութերի վաճառքն ուսումնական հաստատություններում բացառելու վերաբերյալ: Նոյեմբերի 15-17-ն Աղվերանում անցկացվել է <<Թափանցիկությունը և հաշվետվողականությունը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կարևորագույն սկզբունքներ>> եռօրյա սեմինար՝ կազմակերպված ԶԼՄ ներկայացուցիչների համար: Սեմինարի ընթացքում, ի թիվս այլ թեմաների, ներկայացվել է նաև զեկույց՝ <<Կոռուպցիայի դեմ պայքարի ծրագիր-2012-13 թթ.>>: Դեկտեմբերի 20-ին կայացել է ՀՀ ԿԳ նախարարի տարեվերջյան ասուլիսը, որտեղ ի թիվս այլ արդյունքների, նախարարն ամփոփել է հակակոռուպցիոն ծրագրի ուղղությամբ իրականացված աշխատանքները:	Հասարակայնու թյան հետ կապերի և տեղեկատվությ ան վարչություն
19. Գիտելիքի արժևորմանը միտված հասարակական կարծիքի ձևավորում	- հեռարձակվել են սոցիալական հոլովակներ	- Գավառի պետական համալսարանի ուժերով նկարահանվել է հակակոռուպցիոն սոցիալական տեսահոլովակ, որը հեռարձակվել է մարզային հեռուստաընկերությամբ, պատրաստվել են հակակոռուպցիոն պաստառներ: Համալսարանի ջանքերով ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Գեղամա>>	Հասարակայնու թյան հետ կապերի և տեղեկատվությ ան

		հեռուստաընկերությամբ պարբերաբար եթեր է հեռարձակվում <<Համալսարանական ժամ>> հաղորդաշարը, որի շրջանակում ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության, վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամները ներկայացնում են բուհի հակակոռուպցիոն ռամավարությունը: Մայիսի 20-ին հանրապետական ՋԼՄ-ներում լուսաբանվել է 2012-2013 ուսումնական տարվա դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների ընթացքը և արդյունքները, հաղթողները պարգևատրվել են ՀՀ ԿԳ նախարարի կողմից: Լուսաբանվել են նաև փետրվարի 27-ին տեղի ունեցած <<Բրեյն-ռինգ>> ինտելեկտուալ խաղի <<ՀՀ վարչապետի գավաթ>> մրցաշարը, փետրվարի 20-ին կայացած <<Լավագույն ուսանող>> հանրապետական մրցույթը, ինչպես նաև մարտի 19-ին անցկացված ՀՀ բուհերի 14-րդ հանրապետական մարզական խաղերի մեկնարկը:	վարչություն, Հանրակրթության վարչություն, Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն
	- մշակված է <<Հանրակրթության ոլորտում իրականացվող կրթական բնույթի առարկայական մրցույթների, մրցաշարերի, օլիմպիադաների չափորոշիչները սահմանելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը	- Մշակվել և հաստատման է ներկայացվել <<Հանրակրթության ոլորտում իրականացվող կրթական բնույթի առարկայական մրցույթների, մրցաշարերի, օլիմպիադաների չափորոշիչները սահմանելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը:	
	- հրապարակային խրախուսման են արժանացել ինտելեկտուալ խաղերի և մրցույթների, առարկայական	- Օգոստոսի 9-ին տեղի է ունեցել Հայագիտական համահայկական 6-րդ օլիմպիադան, որին մասնակցել են 8 երկրներից ժամանած 150 դպրոցականներ: Հոկտեմբերի 4-ին ՀՀ ԿԳ նախարարը <<Ուսուցչի տոնի>> կապակցությամբ հանրապետության մի խումբ ուսուցիչների պարգևներ է հանձնել: <<Ուսուցչի օրվա>> կապակցությամբ հայտարարվել են <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>> և	

	օլիմպիադաների հաղթողները, լավագույն ուսանողներն ու աշակերտները	<<Տարվա լավագույն դաստիարակ>> ամենամյա մրցույթների հաղթողները: Այս տարի առաջին անգամ կազմակերպվել և անցկացվել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթը: Տարվա լավագույն ուսուցչին և դաստիարակին ՀՀ վարչապետը պարգևատրել է ավտոմեքենաներով: Մրցույթի մասնակից մյուս ուսուցիչները խրախուսվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից: ՀՀ-ում դպրոցականների առարկայական օլիմպիադաներն անցկացվում են հանրակրթական 16 առարկաներից (<<Մաթեմատիկա>>, <<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>, <<Ինֆորմատիկա>>, <<Աստղագիտություն>>, <<Հայոց լեզու, հայ գրականություն>>, <<Ռուսաց լեզու>>, <<Անգլերեն>>, <<Ֆրանսերեն>>, <<Գերմաներեն>>, <<Պատմություն>>, <<Աշխարհագրություն>>, <<Հայոց եկեղեցու պատմություն>>, ՆԶՊ): Հայաստանի դպրոցականները 2013 թվականին մասնակցել են (<<Մաթեմատիկա>>, <<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>, <<Ինֆորմատիկա>> առարկաներից կազմակերպված միջազգային օլիմպիադաներին, որտեղից վերադարձել են 11 մեդալներով՝ 1 արծաթե և 10 բրոնզե: Միջազգային օլիմպիադաների հաղթողները խրախուսվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից: Հոկտեմբերի 9-ին ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ Մ.Մկրտչյանը <<Ուսուցչի տոնի>> առիթով քոլեջների ու ուսումնարանների մի խումբ մանկավարժների հանձնել է ՀՀ ԿԳՆ պատվոգրեր և շնորհակալագրեր: Նոյեմբերի 18-ին կրթության ոլորտում ներդրած ավանդի և երկարամյա մանկավարժական գործունեության համար ՀՀ ԿԳ նախարարը պարգևներ է հանձնել ոլորտի մի շարք վաստակաշատ ներկայացուցիչների: Նոյեմբերի 28-ին Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի է ունեցել <<Լավագույն ուսուցիչ>> ամենամյա հանրապետական մրցույթի 2013 թվականի հաղթողների մրցանակաբաշխության հանդիսությունը: Դեկտեմբերի 23-ին ՀՀ ԿԳ նախարարը ընդունել է Դպրոցական մարզիկների համաշխարհային 13-րդ Գիմնազիադիայի մասնակիցներին և <<Աստղագիտություն>> առարկայի միջազգային օլիմպիադայում բրոնզե մեդալ նվաճած դպրոցականներին, որոնց հանձնել է պատվոգրեր, իսկ մեդալակիրները ՀՀ ԿԳ նախարարության կողմից արժանացել են	

		պարգևների: Գերմանիայի Միջազգային Համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ Հայաստանն առաջին անգամ մասնակցել է <<Համաշխարհային հմտություններ>> 42-րդ միջազգային մրցույթին, որը տեղի է ունեցել 2013 թվականի հուլիսի 2-7-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Լայպցիգ քաղաքում: Հայաստանի ազգային թիմը մասնակցել է 3 հմտություններով՝ ոսկերչություն, խոհարարություն և նորաձևության տեխնոլոգիա: Նոյեմբերի 22-23-ը կայացել է <<Հայաստանի հմտություններ>> ազգային մրցույթը 3 մասնագիտությունների գծով՝ ոսկերչություն, նորաձևություն, խոհարարություն: Մրցույթին հաղթող ճանաչված ուսանողները կմասնակցեն 2015թ. Սան-Պաուլոյում կայանալիք <<Համաշխարհային հմտություններ>> միջազգային մրցույթին:	
20. Կրթության ոլորտի մասնակցային մոնիթորինգ	- կրթության ոլորտում գործում է քաղաքացիական հակակոռուպցիոն ցանց - ներկայացված են քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից հաշվետվություններ, վերլուծություններ, առաջարկություններ - քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից ներկայացված առաջարկությունները ներառված են տեսչական ուսումնասիրություններ	- Մշակված կարգերի նախագծերը դրվում են edu.am և ktak.am կայքերում՝ հանրային քննարկման, ինչպես նաև ուղարկվում են Երևանի քաղաքապետարան և ՀՀ մարզպետարաններ՝ տեղերում քննարկելու և առաջարկություններ ներկայացնելու համար: 2013 թվականին Հանրային քննարկման է դրվել 13 իրավական ակտի նախագիծ: - ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 6-ի՝ <<Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին>> N 598-Ն որոշման նախագիծը մշակելիս փորձագետների կողմից հաշվի են առնվել նաև բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում նաև կրթության ոլորտում գործող ՀԿ-երի կողմից արված առաջարկություններն ու դիտողությունները:	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն, Հանրակրթության վարչություն, Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչություն, Կրթության պետական տեսչություն, քաղաքացիական հասարակության ինստի

	ի ձևաթղթերում		տուտներ (համաձայնությամբ)
21. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում քաղաքացիական գիտակցության բարձրացում և կրթության կառավարման ոլորտում ներգրավվածների կարողությունների զարգացում	- կրթության տարբեր մակարդակներում իրականացված են հատուկ միջոցառումներ/դասընթացներ հակակոռուպցիոն թեմաներով	- Հանրակրթության ոլորտում հակակոռուպցիոն թեմաները ուսուցանվում են հիմնական դպրոցի <<Հասարակագիտություն>> առարկայի շրջանակներում: Միաժամանակ ներդրված է <<Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի>> մեթոդական ուղեցույց-ձեռնարկը հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար: Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում <<Կոռուպցիան և նրա կանխարգելումը>> ծրագիրը ուսուցանվում է ուսումնական պլանների պահուստային ժամերի հաշվին, ինչպես նաև որոշ դրույթներ ընդգրկվել են <<Իրավունքի հիմունքներ>> առարկայի ծրագրում: Բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կրթական ծրագրի մասնագիտությունների՝ <<Տնտեսագիտության հիմունքներ>>, <<Իրավագիտության հիմունքներ>> և <<Քաղաքագիտության հիմունքներ>> առարկաների ծրագրերում (որոնցից մեկի ուսուցումը պարտադիր է ուսանողի համար), ներառված են կոռուպցիային և դրա կանխարգելմանը վերաբերող թեմաներ:	Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն, Հանրակրթության վարչություն, Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչություն, քաղաքացիական հասարակության ինստիտուտներ (համաձայնությամբ)
	- տպագրված են ուսումնական/տեղեկատվական բնույթի նյութեր	- Գավառի պետական համալսարանի ուժերով պատրաստվել են հակակոռուպցիոն պաստառներ, <<ԳՊՀ-ն դեմ է կոռուպցիային>> գրությամբ գրիչներ, կոռուպցիայի դրսևորումները, պատճառներն ու պայմանները բացահայտող և կոռուպցիոն իրավախախտումների դեմ պայքարի միջոցները ներկայացնող տեղեկատվական թերթիկներ:	